Համաձայնագիր-5

01.04.2020թ. կնքված N ՀՀ ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-2020/2 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

«05» 12 2020թ.

ք. Երևան

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի մի կողմից, և "ԱՐ-ՄՈԲԻԼ" ՓԲԸ-ի, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս գործադիր տնօրեն՝ Արթուր Բարսեղյանի, ով գործում է 02.03.2020թ. տրված լիազորագրի հիման վրա մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 56-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ կետերով, ու հիմք ընդունելով 01.04.2020թ. կնքված N ՀՀ ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-2020/2 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1. Երկարաձգել Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը 26 օրացուցային օրով:

1.2. Փոփոխել Պայմանագրի 4.1 կետում նշված 520 640 576 (հինգ հարյուր քսան միլիոն վեց հարյուր քառասուն հազար հինգ հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամ գումարը, այն ավելացնելով 50 467 627 (հիսուն միլիոն չորս հարյուր վաթսունյոթ հազար վեց հարյուր քսանյոթ) ՀՀ դրամ՝ սահմանելով 571 108 203 (հինգ հարյուր յոթանասունմեկ միլիոն հարյուր ութ հազար երկու հարյուր երեք) ՀՀ դրամ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	"ԱՐ-ՄՈԲԻԼ" ՓԲԸ
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7	ք. Երևան, Արաբկիր 49 շենք 1
ՀՎՀՀ 02647057	ՀՎՀՀ 01529671
Հ/Հ 900011054013	Հ/Հ. 2050922001091001
ՀՀ ՖՆ աշխատակազմի	"Ինեկոբանկ" ՓԲԸ
գործառնական վարչություն	
Գլխավոր քարտուղար	
Է. Գևորգյան _____ /ստորագրություն/ Կ.Տ/	Եվ. Բարսեղյան _____ /ստորագրություն/ Կ.Տ/